Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №-2 (40) 2021 Гуманитарные науки

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅԱՆ և ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Հ.Ռ.

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն»

ՊՈԱԿ Մովսես Խորենացի 162Ա

hasmikhovakimyan1@mail.ru

Հոդվածում քննարկվում է սպանություն կատարած դատապարտյալների հոգեվիճակին վերաբերող վերասոցիալականացմանն ուղղված երկու խմբերի՝ վերասոցիալականացման ծրագրերին մասնակցած և չմասնակցած համեմատական վերլուծություններ՝ ըստ տագնապայնության և ագրեսիվության ցուցանիշների, որոնց արդյունքում պարզվեց, որ վերասոցիալականացման ծրագրերին մասնակցած խումբն ունի ագրեսիվության և տագնապայնության ցածր ցուցանիշ:

Հիմնաբառեր. վերասոցիալականացում, դատապարտյալ, տագնապայություն, ագրեսիվություն

Ներկայացված է խմբագրություն 15.06.2021թ.

Դատապարտյալների սոցիալական վերականգնման, պատժի կրման ընթացքում քրեակատարողական հիմնարկներում իրականացվող վերասոցիալականացման աշխատանքների անհրաժեշտության վերաբերյալ տարբեր մոտեցումներ են ներկայացրել մի շարք տեսաբաններ (Ս. Արզումանյան, Է. Գրին, Մ. Ավետիսյան, Վ. Վասիլև, Մ. Ենիկեև, Յու. Չուֆառովսկի, Յու. Անտոնյան և ուրիշներ):

Հոգեբանության մեջ վերասոցիալականացում հասկացությունն առաջին անգամ օգտագործվել է սոցիալական հոգեբաններ Ա. Քեննեդիի և Ի.Դ. Կերբերի կողմից, որն է՝ սոցիալական թերություն ունեցող անձի երկրորդային մուտքը սոցիալ –մշակույթային միջավայր [8]: Ն. Սմելզերի մոտեցման համաձայն՝ վերասոցիալականացումը նոր արժեքների, դերերի, ինչպես նաև նախկին, ոչ բավարար ուսումնասիրված, արդիականությունը կորցրած հմտությունների փոխարեն նոր հմտությունների յուրացումն է [5]: Երբեմն համարժեք են դիտարկվում վերասոցիալականացումն ու

դատապարտյալների ուղղում հասկացությունները: Ըստ Մ. Ռիբակի, վերասոցիալականացումն ավելի լայն հասկացություն է, իսկ ուղղումը պետք է դիտել որպես վերասոցիալականացման ինքնուրույն փուլ [6]:

Սպանություն կատարած անձինք պատիժը կրում են երկարատև ազատազրկմամբ: Քրեական պատիժները, հանդիսանալով հանցավորության դեմ պայքարի կարևոր և արդյունավետ միջոցներ, ծնում են սոցիալական և սոցիալ-հոգեբանական բնույթի բացասական հետևանքներ, որոնք առավել ցայտուն են դրսևորվում ազատազրկում պատժատեսակը կատարելիս: Ազատազրկման սոցիալական և հոգեբանական հետևանքներն այնքան մեծ են, որոնք կարող են գերազանցել ուղղիչ ներգործության միջոցները, և բացասական հետևանքներ ունենալ դատապարտյալների վրա: Ազատազրկումը պետք է միտված լինի դատապարտված անձի վերասոցիալականացմանը: Քրեակատարողական հիմնարկում գտնվելու ժամանակաշրջանը բացասաբար է անդրադառնում անձի վրա՝ կախված պատժաչափից, դատվածությունների քանակից: Քրեակատարողական հիմնարկի առաջ դրված խնդիրների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում դատապարտյալի վերասոցիալականացումը: Միաժամանակ, վերասոցիալակացման գործընթացում հաշվի է առնվում նաև քրեակատարողական հիմնարկի ազդեցությունը դատապարտյալի հոգեկան աշխարհի վրա, որը յուրովի է ազդում նրա վարքի վրա: Այս սոցիալական միջավայրն ունի հետևյալ գործոնները՝ հասարակությունից մեկուսացում, ստիպողաբար միասեռ խմբում ներգրավվում և այլն[7,1]:

Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալների հետ վերասոցիալականացում իրականացնում է ՀՀ Արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերասոցիալականացման ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը: Վերասոցիալականացման ծրագրերն իր մեջ ներառում են հոգեբանական, կրթական և գեղագիտական բաղադրիչ: Ծրագրերը կառուցված են հումանիստական հոգեբանության տեսանկյունից և համադրվելով մեկը մյուսի հետ՝ նպաստում են անձի վերասոցիալականացմանը:

Որպես ընդհանուր երևույթ, քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալների մոտ նկատվում է տագնապայնության և ագրեսիվության աճ: Ուստի կարևոր է դատապարտյալի անհատական հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումը, համապատասխան հոգեբանական միջամտությունների կիրառումը: Դատապարտյալների վերասոցիալականացմանն ուղղված հոգեբանական պատրաստակամության ապահովման համար կարևոր է ագրեսիվության, տագնապայնության, ագրեսիվ և ավտորիտար միջանձնային հարաբերությունների

նվազեցումը, ինքնագնահատականի կարգավորումը, հումանիստական մոտեցման ձևավորումը, արժեքային կողմնորոշումները, աշխարհայացքը, դիրքորոշումները, դրդապատճառային համակարգի փոփոխությունները:

Հետազոտության նպատակն է ցույց տալ իրականացվող վերասոցիալականացման ծրագրերի ազդեցությունը դատապարտյալի հանրային, դրական վարքի ընդունման և ձևավորման վրա:

Փորձարարական հետազոտությունը իրականացվել է 2021թ.-ին, Արմավիրի քրեակատարողական հիմնարկում: Ընտրակազմն է՝ սպանություն կատարած 30 դատապարտյալ ՝ առանձնացնելով երկու խումբ: Առաջին խումբը ներառում է 15 դատապարտյալ, ովքեր մասնակցել են վերասոցիալականացման ծրագրերին, երկրորդ խումբը, որը նույնպես բաղկացած է 15 դատապարտյալից, նրանք ընդգրկված չեն եղել երբևիցե վերասոցալականացման ծրագրերում:

Ուսումնասիրության արդյունքներն ավելի հստակ և տարբերակված դարձնելու նպատակով վերասոցիալականացման ծրագրերին մասնակցած դատապարտյալների խումբը բաժանվել է երկու ենթախմբի՝ 2 և ավելի տարի շարունակական և նպատակաուղղված վերասոցիալականացման ծրագրերին մասնակցող և մեկ տարի մասնակցող: Համակազմը հավաքագրելու ժամանակ ուշադրություն է դարձրվել նաև պատժի տեսակին(ցմահ և ոչ ցմահ) և քրեակատարողական հիմնարկում գտնվելու ժամանակահատվածին, տարիքին՝ 25-45 տարեկան: Թե՛ վերասոցիալականացմանը մասնակցած , թե՛ չմասնակցած անձանց մեջ ներգրավեցին նաև ցմահ դատապարտյալներ, ովքեր պատիժ են կրում մոտ 15-18 տարի արդեն, ինչպես նաև դատապարտյալներ, ովքեր ազատազրկված են դեռևս 3-5 տարի:

Մինչ թեստավորումը դատապարտյալների հետ իրականացվել են զրույցի և դիտման մեթոդները, ներկայացվել է թեստավորման նպատակը: Հետազոտությանը մասնակցած բոլոր դատապարտյալները եղել են առաջին անգամ ազատազրկված: Համակազմի ձևավորումից հետո իրականացվել է դատապարտյալների թեստավորում, ըստ առանձնացված խմբերի: Տեսության վերլուծությունը վկայում է, որ սպանություն կատարած անձանց մոտ առկա է բարձր տագնապայնություն, ագրեսիվություն, կոնֆլիկտայնություն, հուզական անկայունություն և այլն[1,3,4,7]: Թեստավորումը իրականացվել է՝ ելնելով մեր առջև դրված խնդիրներից: Դատապարտյալների շրջանում տագնապայնության մակարդակը որոշելու նպատակով իրականացվել է Չ.Դ.Սպիլբերգերի և Յու.Լ Խանիի կողմից մշակված անձնային և ռեակտիվ տագնապայնության թեստը, որը, չնայած սակավաթիվ հարցադրումների, հնարավորություն է տալիս բացահայտելու տագնապայնության աստիճանը՝ կիրառելով այն այլ մեթոդիկայի՝ Լյուշերի գունային թեստի հետ զուգահեռ: Ագրեսիվության

ուսումնասիրման նպատակով ընտրվել է Բասս-Պերիի ագրեսիվության ախտորոշման հարցարանը: Մեթոդիկան հնարավորություն է ընձեռում բացահայտելու անձի մոտ ֆիզիկական ագրեսիայի, զայրույթի, թշնամանքի և վերբալ ագրեսիայի աստիճանը[2]:

Հետազոտության արդյունքները և հոգեբանական վերլուծությունը

Չ.Դ.Սպիլբերգերի և Յու.Լ Խանիի թեստի վերլուծության արդյունքները, վերասոցիալականացմանը չմասնակցած դատապարտյալների մոտ, ցույց են տալիս, որ առկա է շատ բարձր տագնապայնության մակարդակ: Տագնապայնության համար հնարավոր պատասխանների գումարը կազմում է 90 և ավել միավոր: Վերասոցիալականացմանը մեկ տարի տևողությամբ մասնակցած դատապարտյալների թեստի վերլուծությունը ցուց է տալիս, որ առկա է բարձր տագնապայնության մակարդակ: Տագնապայնության համար հնարավոր պատասխանների գումարը կազմում է 60-70 միավոր:
Վերասոցիալականացմանը երկու և ավել տարի տևողությամբ մասնակցած դատապարտյալների թեստի վերլուծությունը ցուց է տալիս, որ առկա է միջին տագնապայնության մակարդակ: Տագնապայնության համար հնարավոր

Տագնապայնության մակարդակի ցուցանիշ			
Դատապարտյալների թիվը	Վերասոցիալականացմանը չմասնակցած դատ.	Վերասոցիալականացմանը մեկ տարի մասնակցած դատ.	Վերասոցիալականացմանը երկու և ավել տարի մասնակցած դատ.
1	93	62	48
2	97	67	49
3	105	63	39
4	119	70	50
5	98	69	51
6	102	63	51
7	98	68	58
8	94	-	56
9	113	-	-
10	118	-	-

պատասխանների գումարը կազմում է 45-60 միավոր:

Տագնապայնության ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ անկախ դատապարտման տեսակից և պատժի կրման ժամկետից, ապացուցահեն գնահատման, երկարաժամկետ, շարունակական և նպատակաուղղված աշխատանքի դեպքում հնարավոր է նպաստել դատապարտյալների մոտ տագնապայնության մակարդակի իջեցմանը:

Դատապարտյալների հետ իրականացված ագրեսիվության ուսումնասիրման Բաս-Պերիի ախտորոշման մեթոդիկայի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ վերասոցիալականացմանը չմասնակցած դատապարտյալների մոտ ագրեսիվության մակարդակը գերազանցում է մեթոդիկայով սահմանված բոլոր ցուցանիշները, մասնավորապես առկա է շատ բարձր ցուցանիշներ թշնամանքի և ֆիզիկական ագրեսիվության սանդղակով/գրեթե բոլոր միավորները համընկնում են/:

Դատ. թիվ	**Ֆիզիկական ագրեսիա Նորմա՝ 4-5**			**Զայրույթ Նորմա՝ 3-5**			**Թշնամանք Նորմա՝ 3-5**			**վերբալ ագրեսիա Նորմա՝ 2-4**		
	Վերաս	Վերաս	Վերաս	Վերաս	Վերաս	Վերաս	Վերաս	Վերաս	Վերաս	Վերաս	Վերաս.	Վերաս
1	7	5	3	6	6	4	8	6	4	5	5	4
2	8	5	4	6	6	3	7	5	3	5	5	3
3	6	5	4	6	5	3	7	5	4	4	4	2
4	8	4	3	7	6	4	8	6	4	5	5	3

Ագրեսիվության ուսումնասիրման Բաս-Պերիի ախտորոշման մեթոդիկայի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ վերասոցիալականացմանը մեկ տարի մասնակցած դատապարտյալների մոտ բարձր է զայրույթի և վերբալ ագրեսիայի մակարդակը:

Ագրեսիվության ուսումնասիրման Բաս-Պերիի ախտորոշման մեթոդիկայի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ վերասոցիալականացմանը երկու տարի և ավել մասնակցած դատապարտյալների մոտ, բացառությամբ երկու դեպքի, գտնվում են նորմայի սահմաններում:

Համեմատելով վերասոցիալականացման ծրագրերին մասնակցած և չմասնակցած դատապարտյալների փորձարարական հետազոտության արդյունքները և իրականացնելով համահարաբերակցական վերլուծություն՝ պարզ է դառնում, որ անհատական մոտեցումով կազմված վերասոցիալականացման նպատակասլաց և

շարունակական ճիշտ ծրագիրը կարող է դրական ազդեցություն ունենալ դատապարտյալի անձի վերափոխմանը՝ վարքագծի նորմերի և կանոնների, անհատական արժեքների նոր համակարգի ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Էլդա Գրին, ՈՒղղիչ (պենիտենցիար) հոգեբանություն, «Զանգակ-97», Երևան 2002,
2. Հ.Մ.Ավանեսյան,Ն.Ա.Հարությունյան,Ս.Վ.Հովհաննիսյան,Լ.Ս.Ստեփանյան/,Է.Վ. Ասիրյան, Զինվորի հոգեկան հատկությունների գնահատման և զարգացման մեթոդներ: - Եր. ԵՊՀ հրատ. 2017.
3. Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступника и расследования преступлений М., 1996-с 203
4. 10.Антонян Ю. М. Психология убийства. М., 1997, с. 146.
5. Смелзер Н. Социология. - М., 1994, էջ 112:
6. Рыбак М.С.Ресоциализация осужденных к лишению свободы: проблемы теории и практики / - 2-е изд., испр. и доп. - Саратов: Изд-во ГОУ ВПО «Саратовская государственная академия права», 2004, էջ 31:
7. Кудрявцев. В. Н. Криминология. 2009
8. Resocialization:An American Experiment.Kennedy,Daniel B.,August

SUMMARY

ANXIETY AND AGGRESSIVENESS INVESTIGATION OF INDIVIDUALS WHO COMMITTED HOMICIDE

HOVAKIMYAN H.R

The article discusses a comparative analysis of two groups - participants and non-participants in the re-socialization programs, aimed at re-evaluating the mental state of convicts who committed murder according to the indicators of anxiety and aggressiveness, and as a result the group that participated in the re-socialization programs turned out to have a low indicator of aggressiveness and anxiety.

The concept of re-socialization in psychology was first used by social psychologists A. Kennedy and I.D. Kerber - that is the secondary entry of a person with a social disadvantage into the socio-cultural environment. To N. Smelzer's approach, re-socialization is the mastering of new values, roles, as well as new skills instead of previously insufficiently studied outdated skills.

The perpetrators of the murder are serving long-term imprisonment. Criminal punishments, being important and effective means of combating crime, generate negative consequences of a social and socio-psychological nature.

Re-socialization with convicts serving sentences in penal institutions in the Republic of Armenia is carried out by the "Legal Education and Re-Socialization Programs Implementation Center" SNCO

of the Ministry of Justice of the Republic of Armenia.

Increase in anxiety and aggression is noticed within convicts in penal institutions. Therefore, it is important to study the individual psychological characteristics of the convict and to apply appropriate psychological interventions.To ensure psychological readiness for the re-socialization of convicts, it is important to reduce aggressiveness, anxiety, aggressive and authoritarian interpersonal relationships, normalize self-esteem, form a humanistic approach, value orientations, worldview, attitudes, changes in the motivational system.

The experimental research was conducted in 2021 in "Armavir" penitentiary institution of the RA Ministry of Justice. 30 murder committed convicts are chosen and separated into two groups. The first group includes 15 convicts who participated in re-socialization programs, the second group, which also consists of 15 convicts have never been involved in re-socialization programs.

In order to make the results of the study clearer and more differentiated, the group of convicts who participated in the re-socialization programs was divided into two subgroups: participating in programs of continuous and purposeful re-socialization for 2 or more years and participating for a year. During the recruitment of the team, attention was paid to the type of punishment (life and non-life), the period of stay in the penitentiary institution, age 25-45 years. Among the persons who took part and did not participate in the re-socialization, life convicts serving sentences of about 15-18 years, as well as convicts deprived of liberty for another 3-5 years were also involved.

To determine the level of anxiety among the convicts, a personal-reactive alarm test developed by D.Spilberger and Yu. L.Xanii is implemented which despite the small number of questions, makes it possible to identify the degree of anxiety by applying it with another technique - the Lyusher color test. The Bass Perry Aggression Diagnostic Questionnaire was selected to examine aggression. The technique makes it possible to identify the degree of physical aggression, anger, hostility and verbal aggression within a person.

The results of the analysis of Ch.D. Spielberger և Y.L. Khan test on convicts who did not participate in re-socialization show that a very high level of anxiety is avalable. The sum of possible responses to anxiety is 90 and more points. The analysis of the test of convicts who participated in the re-socialization for a year shows a high level of anxiety. The sum of possible responses to anxiety is 60-70 points.

The analysis of the test of convicts who participated in the re-socialization for more than two years shows an average level of anxiety. The sum of possible responses to anxiety is 45-60 points.

The results of the analysis of the bas-Perry diagnostic methodology for the study of aggressiveness show that convicts who took part in re-socialization for a year have a high level of anger and verbal aggression

The results of the analysis of the bas-Perry diagnostic methodology for the study of aggressiveness show that convicts who have participated in resocialization for more than two years, with the

exception of two cases, are within the normal range.

Comparing the results of an experimental study of convicts who took part and did not take part in re-socialization programs, and conducting a joint analysis, it becomes clear that a purposeful and consistent correct re-socialization program, compiled by an individual approach, can have a positive impact on the transformation of the convict's personality into the formation of a new system of norms and rules of behavior, individual values:

РЕЗЮМЕ

ИССЛЕДОВАНИЕ ТРЕВОЖНОСТИ И АГРЕССИИ УБИЙЦ

ОВАКИМЯН А.Р.

В статье, относящейся к ресоциализации, проводится сравнительный анализ психического состояния осуждённых за совершённые ими убийства. Данный анализ направлен на сравнение двух групп – участвующих и неучаствующих в программе ресоциализации в соответствии с показателями внутренней тревоги и агрессивности. В результате было выявлено, что группа, участвующая в программе ресоциализации, обладает показателем низкой агрессивности и внутренней тревоги.

Ключевые слова – ресоциализация, осужденный, тревожность, агрессия

Տպագրության է երաշխավորել հոգ.գիտ.դոկտոր, պրոֆ. Կ.Վարդանյանը 30.06.2021թ.